Էլաւ, մօր խաթր չ'կպաւ, մօր խաթր պախից, առից տաւրաւ. առից, տարաւ, իտի մէջ մէյդընին։

Դաւիթն էր, զինք խաստակուղ ազգ էր, մտաւ, նստաւ հոլտուն։ Էնկանդար[1]) աղաչից ախպէր, չ'լսաւ. որ չ'լսաւ, ըռըկաւ. որ ըռըկաւ, էսաց.—Կ'երթամ էնդեխէն զհոլ կ'զարկիմ մէկ տիր սպանը։

Զինք կինաց, հոլ առից, էթալ, էսաց.—Զարկիմ մէկ տիր սպանուը, ճայ ուր տեղ։

Էնդեխէն ոբ հոլ էզար՝ տը կէր հոլտուն, Դաւիթ զձեռ իտու, զհոլ դարձիւցից, իրիք խարիր ձիաւուր փէրիզ-փահլիւան սպանից։ Էդ աւուր ուրախութին, խաղ, ուտիլ, խմիլ բեադլըցին[2])։

—Աբա ի՞նչխ էնինք, ի՞նչխ չ'էնինք։

—Տ'սպանինք զԴաւիթ.

Ասին.—Էստեղ մը սպանը, տար մատ քիւ մէր, նուր սպանը։

Օր կէսօր էր. առին զԴաւիթ, էկան տուն։

Մէկէլ եանէն[3]) էնուր մալէք, ախընդքիր[4]) էկին, էդ իրիք խարիր ջամդաք[5]) տարան գըռըցին[6])։

Մսրամելիք զԴաւիթ առից, տարաւ ուր տուն։

Էսաց.—Մարէ, տիւ զիմ աչքիր կուրցըցիր, մեանչ իմ աղգուն զձը սիւիրիս էրիր. մարէ, էսա տիր տ'սպանիմ։

Էսաց.—Ա՜յ որտի, որ տիւ տ'սպանիս, էսաց, էրկու փէրիզ[7]) գնդէ, տիւն չ'սպանիս, մեիք ինկնի քիւ վիզ, տի խիտ թըխ[8]) տանին ուր խէրանական էրկիր, Մուրադ—ջիւրու բերան, խանին վեար Բաթմանայ կարմնջին, վիզ կտրին, թալին գիտ։

Էրկու փէրիզ*), առին զԴաւիթ, էկան։ Դաւիթն ի, էլ փէ-

---

[1]) Այնքան։ [2]) Վերջացրին, քանդեցին։ [3]) Կողմից։ [4]) Ախունդ—մահմեդական հոգևոր պաշտօնեայ։ [5]) Դիակ, լէշ։ [6]) Թաղել։ [7]) Քաջ դիւցազն, ըմբշամարտ։ [8]) Թող։

*) Ա. և Բ. վարիանտներով երկու փէրիզներն են Բաթմանայ Բիւղէն և Ճարպախար-Քեամին։